**Տնային առաջադրանք**

**262.** Բետոնը ցեմենտի, ավազի և խճի խառնուրդ է: Ցեմենտը բետոնի 1/7 մասն է, ավազը՝ 2/7-ը, իսկ խիճը՝ 4/7-ը: Բետոնի բաղադրիչների համար կազմե՛ք շրջանաձև դիագրամ:




**263.** Երկրագնդի օվկիանոսներն ունեն մոտավորապես հետևյալ մակերեսները. Խաղաղ օվկիանոսը՝ 180 մլն քառակուսի կիլոմետր, Ատլանտյան օվկիանոսը՝ 92 մլն քառակուսի կիլոմետր, Հնդկական օվկիանոսը՝ 75 մլն քառակուսի կիլոմետր, Հյուսիսային սառուցյալ օվկիանոսը՝ 13 մլն քառակուսի կիլոմետր: Գծե՛ք այդ օվկիանոսների մակերեսների շրջանաձև դիագրամ:




**272.** Մեքենայի բաքի տարողությունը 80 լ է: Քանի՞ լիտր բենզին կա բաքում, եթե լցրել են նրա 45 %-ը:

$$\frac{80 \bullet 45}{100} = 36$$

**Պատ.՝ 36 լ բենզին**